600.0294.02.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

02 սեպտեմբերի 2020 թվականի №294Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ «ՌԵԳԻՈՆ ԻՆՎԵՍՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի հուլիսի 21-ի №422-20 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Տերյան փողոցի 108 հասցեում գտնվող ՏԵ-38 ենթակայանին և դրանով զբաղեցված հողամասին հարակից, այն է՝ Տերյան փողոցի 107 հասցեում գտնվող բազմաբնակարանային շենքը և Տերյան փողոցի 107 շենքի բակի ցանկապատ տարածքը՝ շինությունով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի №347 որոշմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ: Ընկերության գրության համաձայն, նշված տարածքներում շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է, որ Ընկերությանը պատկանող ենթակայանը և դրանով զբաղեցված հողամասին հարակից տարածքը առուվաճառքի գործարքով (այսուհետ՝ Գործարք) հանձնվի վերը նշված տարածքների ձեռք բերող հանդիսացող՝ «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Ըստ գրության, Գործարքի կողմերի միջև կնքվելիք համաձայնագրով նախատեսվում է, որ «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ընդհանուր շինարարական աշխատանքների շրջանակներում իրականացնի նոր, ավելի հզոր ենթակայանի կառուցման աշխատանքներ, և, Գործարքի կնքումից հետո 30 ամսվա ընթացքում, վերջինիս և Ընկերության միջև կնքվի նոր ենթակայանի տարածքի առուվաճառքի գործարք, ընդ որում՝ Ընկերության համար

լրացուցիչ ֆինանսական պարտավորություն չառաջանալու համար կնքվելիք գործարքների գները պետք է սահմանվեն համարժեք՝ անկախ նոր կառուցվող շինության շուկայական արժեքի՝ ավելի բարձր լինելու հանգամանքից: Բացի այդ, գրության համաձայն՝ մինչև նոր ենթակայանի կառուցումը և գործարկումը, «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվում է տեղադրել ժամանակավոր ենթակայան՝ Ընկերությանը պատկանող ՏԵ-38 ենթակայանից սնվող բաժանորդներին անխափան էլեկտրասնուցմամբ ապահովելու համար: Ուստի վերը նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրում է տալ Գործարքին համաձայնություն,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգով, 2020 թվականի օգոստոսի 5-ի № ԳԲ/34.1-Մ2-2/3323-2020 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 21-ի №02/12.8/39892-2020 գրությամբ Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումների համաձայն՝ Գործարքի մասով առարկություններ առկա չեն,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանը և պետական շահերին, իսկ անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և,

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Տերյան փողոցի 108 հասցեում գտնվող ՏԵ-38 ենթակայանը և դրանով զբաղեցված հողամասը «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առուվաճառքի գործարքով օտարելուն՝ պայմանով, որ՝

1) Ընկերությունը սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո 30 ամսվա ընթացքում «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք կբերի նոր ենթակայանի համար նախատեսված գույքը,

2) Գործարքի առարկա հանդիսացող, Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Տերյան փողոցի 108 հասցեում գտնվող ՏԵ-38 ենթակայանից սնվող բաժանորդներին անխափան էլեկտրասնուցմամբ ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ ենթակայանը կհանձնի «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ վերջինիս կողմից ժամանակավոր ենթակայանի կառուցումից և դրա գործարկումից հետո:

2. Ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող փաստաթղթերի պատճենները.

2) ընդունել ի գիտություն, որ

ա. Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Տերյան փողոցի 108 հասցեում գտնվող ՏԵ-38 ենթակայանից էլեկտրաէներգիա ստացող բաժանորդներին անխափան էլեկտրասնուցմամբ ապահովելու պարտավորությունը և դրա պատասխանատվությունը կրում է Ընկերությունը,

բ. սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից նոր ենթակայանի ձեռքբերման ծախսը կներառվի Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում՝ ոչ ավելի, քան 63483000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով,

գ. որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Ընկերությունն իրավասու է այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
02 սեպտեմբերի 2020թ.